Ոչ պաշտոնական թարգմանություն

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը

Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ասոցիացիայի նախագահի բաց նամակը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ պարոն Արարատ Միրզոյանին

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում փոփոխություն նախատեսող սահմանադրական օրենքի նախագծի առնչությամբ

Պարոն Նախագահ,

Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ասոցիացիան, որը 36 ֆրանկոֆոն պետությունների 47 անդամներից կազմված միջազգային անկախ ասոցիացիա է, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի անդամակցությամբ, տեղեկացել է, որ Ձեր երկրի կառավարությունը ներկայացրել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություն նախատեսող սահմանադրական օրենքի նախագիծը:

Քննարկվող փոփոխությունը, որը նախաձեռնվել է առանց Մարդու իրավունքների պաշտպանի հետ քննարկման և ներգրավմամբ, նպատակ ունի վերացնել սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասը, որի համաձայն՝ մարդու իրավունքների ազգային հաստատության և կանխարգելման ազգային մեխանիզմի ֆինանսավորման համար պետական բյուջեով նախատեսված հատկացման չափը չի կարող պակաս լինել նախորդ տարվա պետական բյուջեով նախատեսված հատկացման չափից:

Արդյունքում, վերոնշյալ դրույթի ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ փոփոխությունը կթուլացնի հաստատության գործունեության ընդհանուր արդյունավետությունը և հատկապես նրա կարողությունը՝ որպես կանխարգելման ազգային մեխանիզմ երկրի ողջ տարածքում ազատությունից զրկման վայրերն արդյունավետ մշտադիտարկում իրականացնելու համար:

Այս տեսանկյունից Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ասոցիացիան, որն ունի Ֆրանկոֆոնիայում Օմբուդսմանի և Հաշտարարի դերը խթանելու և ֆրանկոֆոն տարածքում անկախ միջնորդական հաստատությունների զարգացումն ու համախմբումը խրախուսելու հիմնական առաքելություն, հիմնվելով մասնավորապես՝

- **Փարիզյան սկզբունքների վրա** (ընդունված Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 48/134 բանաձևով), որոնք սահմանում են միջազգային նվազագույն չափանիշները, որոնք պետք է հարգվեն մարդու իրավունքների ազգային հաստատություններն անկախ և արդյունավետ ճանաչվելու նպատակով,
- **Վենետիկյան սկզբունքների վրա** (Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի կողմից 2019 թվականի մարտին ընդունված Օմբուդսմանի հաստատության պաշտպանության և խթանման վերաբերյալ), որի 21-րդ հոդվածը սահմանում է. «Օմբուդսմանի հաստատությունը պետք է ապահովված լինի բավարար և անկախ բյուջետային միջոցներով: Օրենքը պետք է սահմանի, որ Օմբուդսմանի հաստատությանը բյուջեի միջոցների հատկացումը պետք է համապատասխանի իր պարտականությունների և գործառույթների լիարժեք, անկախ և արդյունավետ կատարումն ապահովելու անհրաժեշտությանը: Բյուջեի նոր հատկացումները պետք է քննարկվեն Օմբուդսմանի հետ և վերջինս պետք է հրավիրվի բյուջեի նախագիծ ներկայացնելու համար: Հաստատության համար հաստատված տարեկան բյուջեն չի կարող կրճատվել ֆինանսական տարվա ընթացքում, եթե նման կրճատումները, ընդհանուր առմամբ, չեն վերաբերում այլ պետական հաստատություններին: (…)»,
- **Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 2020 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Օմբուդսմանի և միջնորդական հաստատությունների դերը մարդու իրավունքների, լավ կառավարման և իրավունքի գերակայության խթանման և պաշտպանության գործում» 75/186 բանաձևի վրա**, որը կոչ է անում անդամ երկրներին ստեղծել ինքնուրույն և անկախ օմբուդսմաններ կամ միջնորդներ և պահանջում է, որ օմբուդսմանների

հաստատություններն օգտվեն բավարար ֆինանսական միջոցներից՝ իրենց մանդատն արդյունավետ, անկախ և վստահ իրականացնելու համար,

որպես Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ, խնդրում եմ Ձեզ տեղեկացնել ձեր երկրի կառավարությանը, ինչպես նաև Ազգային ժողովի պատվավոր անդամներին՝ վերոնշյալ միջազգային սկզբունքներն ու մեխանիզմները հաշվի առնելու հրամայական անհրաժեշտության և քննարկվող սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթների պահպանման հիմնարար արդիականության մասին:

Հիմնվելով Ձեր արժեքավոր համագործակցության և գնահատելի աջակցության վրա՝ խնդրում եմ Ձեզ, պարոն Նախագահ, ընդունել խորին հարգանքներիս հավաստիքը:

Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ասոցիացիայի գրասենյակի համար

Ֆրանկոֆոն օմբուդսմանների և հաշտարարների ասոցիացիայի նախագահ

Մոհամեդ ԲԵՆԱԼԻԼՈՒ